**01/10.5/16104-10**
**2010-12-17**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյանի, Վահան Հովհաննիսյանի, Արծվիկ Մինասյանի, Վարդան Բոստանջյանի, Գոհար Ենոքյանի, Հակոբ Հակոբյանի և Վերսանդ Հակոբյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ավելացված արժեքի հարկի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Գործունեության այն տեսակներով, որոնց համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է 100 հազ. դրամ կամ ավելի, գերազանցապես զբաղվում են խոշոր և մեծ նյութական միջոցներ ունեցող կազմակերպությունները։ «Պետական տուրքի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով 100 հազ. կամ ավելի դրամ գումար չափով տարեկան պետական տուրքի գումար է սահմանված, օրինակ, առևտրի

իրականացման վայրի, ազատ տնտեսական գոտու կազմակերպման, ինվեստիցիոն ընկերությունների, ինվեստիցիոն հիմնադրամների գործունեության, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման, սպիրտային խմիչքների արտադրության կազմակերպման համար: Կարծում ենք, որ գործունեության այս տեսակներով փոքր և միջին ձեռնարկությունները հիմնականում չեն զբաղվում:

100 հազ. դրամ կամ ավելի գումարի չափով տարեկան պետական տուրքի վճարման պարտավորությամբ գործունեության տեսակները բնորոշ չեն մանր և միջին կազմակերպություններին ոչ միայն այն պատճառով, որ գործունեության այդ տեսակները ենթադրում են խոշոր կարողությունների և, հետևաբար, մեծ շրջանառությունների առկայություն, այլ նաև այն պատճառով, որ վճարվող պետական տուրքը պետք է «փոխհատուցվիե ստացվող եկամուտներով՝ ինչը հնարավոր է միայն շրջանառությունների նշանակալի ծավալի դեպքում:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված նախագծի ընդունումը համարում է ոչ նպատակահարմար:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Նախագիծ*

*Պ-1013-29.10.2010-ՏՀ-010/0*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «Ավելացված արժեքի հարկի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

***Հոդված 1.*** «Ավելացված արժեքի հարկի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-118, 16 հունիսի 1997թ.) 3-րդ հոդվածի 3-րդ մասի «բե կետը հանել։

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը։

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավելացված արժեքի հարկի մասինե (ՀՕ-118, 16 հունիսի 1997թ.) Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով նախատեսվում է անձանց, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված՝ սույն օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ եւ (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը (ԱԱՀ-ի շեմը) գերազանցող մասի համար։ Սակայն միեւնույն ժամանակ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանափակում է դրվում լիզենզավորման ենթական գործունեություն իրականացնող կամ լիցենզիա ունեցող այն անձի նկատմամբ, որի գործունեության լիցենզիայի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է 100 հազար դրամ կամ ավելի։

Պետք է նշել, որ նման մոտեցումը տնտեսական գործունեություն իրականացնող փոքր եւ միջին ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ անարդարացի է, հիմնավորված չէ եւ ամենեւին էլ չի խթանում նման գործունեություն իրականացնող ձեռնարկությունների զարգացմանը։ Տրամաբանական չէ նաեւ, թե օրինակ ինչ տարբերություն կարող է լինել սույն օրենքից օգտվող այն ձեռնարկությունների հարկման մասով, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 10 մլն. դրամը եւ այն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների համար, որոնց տարեկան շրջանառությունը 57 եւ կամ 58 մլն. դրամի շրջանակներում է տատանվում։

Հետեւաբար հարց է առաջանում, թե ինչու մեկը պետք է օգտվի այս արտոնությունից, իսկ մյուսը, որի գործունեության համար լիցենզիայի պետական տուրքի տարեկան գումարի չափը անցնում է 100 հազար դրամը, սակայն նրա տարեկան շրջանառությունը փոքր է, չպետք է օգտվի սույն օրենքով տրվող արտոնությունից: Լիցենզիայի պետական տուրքի չափից կախված նման սահմանափակումն հիմնավոր չէ եւ չի բխում «Փոքր եւ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասինե ՀՀ օրենքի, ինչպես նաեւ կառավարության որդեգրած ՓՄՁ աջակցության ծրագրի նպատակներից: